ՎՏԱՆԳԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԱՅԼ ՈՒՂԻՆԵՐ սեռական հարաբերության և հասարակական միջոցառումների ընթացքում

- Սեռական զուգընկեր(ների) հետ զրուցեք ցանկացած վերջին հիվանդության և նոր կամ անբացատրելի վերքերի/ցաների մասին, ներառյալ դրանց, որոնք սեռական օրգանների կամ հետանցքի վրա են: Խուսափեք սեռական հարաբերությունից և մաշկը մաշկին շփումից, եթե զուգընկերներից որևէ մեկը կապիկի ծաղիկի ախտանշաններ ունի կամ նրա մոտ ախտորոշվել է կապիկի ծաղիկ:
- Համատեղ մի օգտագործեք չլվացված սպասքը կամ բաժակները, սրբիչները, անկողնային պարագաները կամ հագուստը:
- Օգտագործեք պահպանակ: Հավանական է, որ միայն պահպանակը բավարար չէ կապիկի ծաղիկից խուսափելու համար: Բայց այն կարող է նվազեցնել վարակվելու վտանգ և կարող է կանխել բշտիկների առաջացումը մարմնի զգայուն մասերում, ինչպիսիք են հետանցքը, բերանը կամ սեռական օրգանները:
- Կրճատեք սեռական զուգընկերների քանակը:
- Խուսափեք ավելի մեծ վտանգ պարունակող գործողություններից, ինչպիսիք են անծանոթ մարդու հետ սեռական հարաբերությունը և սեքս-խնջույքները:
- Խուսափեք այցելել այնպիսի վայրեր, որտեղ մարդիկ կրում են քիչ հագուստ և որտեղ կա անմիջական, ինտիմ, մաշկը մաշկին շփում:
- Հանրային վայրերում ծածկեք ձեր մաշկը:

Կապիկի ծաղիկի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար այցելեք՝ ph.lacounty.gov/Monkeypox/

9/15/2022 ARMENIAN

ԲՈՒԺՈՒՄ

Կապիկի ծաղիկով հիվանդ շատ մարդիկ հիվանդանում են վիրուսի թեթև տաբերակով և ապաքինվում են առանց որևէ հակավիրուսային բուժման: Տեկովիրիմատ (tecovirimat կամ TPOXX) կոչվող հակավիրուսային դեղամիջոցը կարող է նշանակվել կապիկի ծաղիկի ծանր ընթացք ունեցող մարդկանց, ներառյալ նրանց, որոնք մարմնի զգայուն մասերում ունեն վերքեր կամ ցավ, որը հնարավոր չէ վերահսկել առանց դեղատոմսի վաճառվող դեղամիջոցներով: Այն կարող է տրվել նաև այն մարդկանց, որոնք ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան:

Անհապաղ **ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵՔ ՁԵՐ ԲԺՇԿԻ ՀԵՏ**, եթե ձեր մարմնի որևէ մասում ունեք նոր, անբացատրելի, ցան կամ վերքեր: Սա հատկապես կարևոր է, եթե դուք շփվել եք որևէ մեկի հետ, ով հիվանդ է կամ կասկած կա, որ կապիկի ծաղիկ ունի:

ԵԹԵ ԴՈՒՔ ԲԺԻՇԿ ՉՈՒՆԵՔ՝

- Զանգահարեք Հանրային Առողջության Վարչության Զանգերի Կենտրոն 1-833-540-0473 հեռախոսահամարով (շաբաթը 7 օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը), կամ
- Այցելեք ձեր մոտակայքում գտնվող Հանրային Առողջության Վարչության սեռական առողջության կլինիկա:

ՍԿԱՆԱՎՈՐԵՔ QR ԿՈԴԸ՝ ՏԵՂԱՆՔԸ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

County of Los Angeles Public Health

Ի՞նչ է կապիկի ծաղիկը

Կապիկի ծաղիկը վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկ վիրուսից: Յուրաքանչյուր ոք, ով սերտ անձնական կապ է ունեցել կապիկի ծաղիկ ունեցող հիվանդի հետ, գտնվում է ռիսկի խմբում:

Որո՞նք են կապիկի ծաղիկ հիվանդության նշանները և ախտանշանները

Կապիկի ծաղիկի ախտանշանները սովորաբար դրսևորվում են վարակակրի հետ շփումից հետո 3 շաբաթվա ընթացքում:

Ամենատարածված ախտանիշը ցանն է, որը կարող է՝

- Նման լինել ելուստների, բշտիկների, պզուկների կամ խոցերի
- Առաջանալ մարմնի ցանկացած հատվածում, ներառյալ՝ սեռական օրգանները, հետանցքը, բերանը, ձեռքերը և դեմքը:
- Գտնվել ինչպես մարմնի մեկ մասում, այնպես էլ տարածվել ողջ մարմնով
- Գոր գալ կամ ցավոտ լինել (հատկապես եթե բերանի և հետանցք մեջ է)

Մարդկանց մոտ կարող են առաջանալ նաև հարբուխին բնորոշ ախտանիշներ:

Ջերմություն/դող

Հոգնածություն, մկանային ցավեր և գլխացավ

Այտուցք ավշային հանգույցում

Դրանք կարող են ի հայտ գալ ցանը սկսվելուց 1-4 օր առաջ կամ հետո: Ոչ բոլորը կարող են ունենալ դրանք:

Նշում. ցանը կարող է ունենալ վերը նշված օրինակներից տարբերվող տեսք:

Ինչպե՞ս է տարածվում կապիկի ծաղիկը

Հայտնի է, որ կապիկի ծաղիկը տարածվում է սերտ, ինտիմ և/կամ երկարատև շփման միջոցով, ներառյալ՝

- Սեռական հարաբերության և այլ մտերմիկ (ինտիմ շփման ժամանակ կապիկի ծաղիկով հիվանդի հետ մաշկը մաշկին անմիջական շփում կապիկի ծաղկի ցանի, վերքերի և վերքերի կեղևի հետ: Սա կարող է ներառել համբույրը, մերսումը և գրկախառնվելը:
- Շնչառական արտազատուկների հետ շփում: Դա կարող է տեղի ունենալ երկարատև, սերտ, դեմառդեմ կամ շփման կամ մտերմիկ (ինտիմ) ֆիզիկական շփման ժամանակ, ինչպես օրինակ՝ կապիկի ծաղիկով հիվանդ մարդու հետ համբուրվելիս, գրկախառնվելիս և սեռական հարաբերություն ունենալիս:
- Շփում առարկաների և գործվածքների հետ (օրինակ՝ չլվացված հագուստ և անկողնային պարագաներ, ընդհանուր սրբիչներ), որոնք օգտագործվել են կապիկի ծաղիկով հիվանդի կողմից և չեն լվացվել:

Կապիկի ծաղիկով հիվանդ մարդը կարող է վարակել ուրիշներին՝ սկսած ախտանշանների հայտնվելու պահից,մինչև երբ ցանը բուժվել է, կեղևակալած մաշկը թափվել է և մաշկի նոր շերտ է առաջացել: Դա սովորաբար տևում է 2-4 շաբաթ:

Կապիկի ծաղիկով հղի անձը կարող է վիրուսով վարակել իր պտղին ընկերքի միջոցով:

Կապիկի ծաղիկը ՉԻ փոխանցվում հիվանդի հետ պատահական (կարճատև) զրույցների կամ նրա կողքով քայլելու միջոցով:

Ինչպե՞ս խուսափել կապիկի ծաղիկով վարակվելուց

1 Խուսափեք մաշկը մաշկին կամ երկարատև սերտ շփումից մեկի հետ, ով ունի կապիկի ծաղիկի ախտանիշեր:

- Պարզապես մի դիպչեք նրանց մարմնի ցանին կամ վերքերի կեղևին:
- Մի համբուրեք, մի գրկեք, մի գրկախառնվեք և սեքսով մի զբաղվեք նրանց հետ (բերանային, հետանցքային, հեշտոցային):

2 Խուսափեք դիպչելուց կեղտոտ իրերին և նյութերին, որոնք օգտագործվել են կապիկի ծաղկի ախտանիշներ ունեցող անձի կողմից:

- Նրանց հետ մի օգտագործեք նույն մահճակալը, սրբիչները, հագուստը կամ վերմակը, եթե դրանք լվացված չեն:

3 Հաճախ լվացեք ձեռքերը:

- Ձեռքերը հաճախ լվացեք օճառով և ջրով կամ օգտագործեք սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց: Դա հատկապես կարևոր է ուտելուց առաջ և զուգարանից օգտվելուց հետո: Խուսափեք չլվցված ձեռքերով ձեր դեմքին դիպչելուց:

4 Պատվաստվեք, եթե իրավասու եք:

- Կապիկի ծաղիկով վարակվելու բարձր վտանգ ունեցող մարդիկ կարող են պատվաստվել՝ նվազեցնելու վարակվելու վտանգը: Պատվաստանյութը կարող է տրամադրվել նաև այն մարդկանց, ովքեր շփվել են կապիկի ծաղիկով հիվանդ մարդկանց հետ՝ օգնելու կանխարգելել կապիկի ծաղիկի տարածումը կամ այն դարձնել պակաս ծանր: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր բժշկին կամ այցելեք ph.lacounty.gov/monkeypox կայքը: